

ՀՄԿ բարձրաստիճան պաշտոնյայի այցը Հայաստան

ՀՄԿ փոխնախագահ Ջոն Հյուկոն հանդիպումներ է ունենում ՀՀ բարձրաստիճան պետական այրերի հետ

ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումներ ունենալու ու Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի (ՀՄԿ) 235 միլիոն դոլարի հայաստանյան ծրագրի առաջընթացը դիտարկելու նպատակով Հայաստանում է գտնվում ՀՄԿ գործառնական հարցերով փոխնախագահ Ջոն Հյուկոն:

Հանդիպումների ընթացքում Ջ. Հյուկոն շեշտեց, թե ՀՄԿ-ն ու ամերիկյան կառավարությունն ինչ մեծ կարելություն են տալիս ՀՄԿ կողմից երկրի մասնակցության իրավասության որոշման նպատակով կիրառվող 16 օբյեկտիվ չափանիշների մասով Հայաստանի կողմից կատարողական ցուցանիշների բարձր մակարդակի շարունակաբար ապահովմանը: Այս ցուցանիշներով է գնահատվում երկրի գործունեությունը արդարացի կառավարման, մարդկային կապիտալի ոլորտում ներդրումների կատարման ու տնտեսական ազատության խթանման ասպարեզում: Քանի որ առաջիկա խորհրդարանական ու նախագահական ընտրությունները ուղղակիորեն անդրադարձ կունենան արդարացի կառավարման ոլորտի երեք ցուցանիշների, մասնավորապես՝ Քաղաքական իրավունքների, Քաղաքացիական ազատությունների եւ Չայնի ու հաշվետվողականության վրա, Հյուկոն հատկապես կարելորեց ՀՀ կառավարության կողմից նախորդ ընտրությունների համեմատ նշանակալիորեն բարելավված ընտրություններ անցկացնելու մասին ստանձնած պարտավորության կատարումը:

Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան ԱՄՆ պետական գործակալություն է, որն աշխատում է աշխարհի ամենաաղքատ երկրների հետ՝ հիմնվելով այն սկզբունքի վրա, որ օժանդակությունն առավել արդյունավետ է, երբ տնտեսական աճի խթանումն ու չքավորության վերացումը իրականացվում է լավ կառավարման, տնտեսական ազատության ու մարդկային կապիտալի ոլորտում ներդրումների ամրապնդման ճանապարհով: 2006թ. մարտի 27-ին կնքված ու սեպտեմբերի 29-ին գործողության մեջ մտած ՀՄԿ – Հայաստան համաձայնագրով նախատեսվում է կրճատել գյուղական աղքատությունը՝ գյուղատնտեսության ոլորտում տնտեսական ցուցանիշների կայուն ու տևական աճի ապահովման միջոցով: Հայաստանը նախատեսում է դա իրագործել գյուղական ճանապարհներում, ոռոգման ենթակառուցվածքներում ռազմավարական ներդրումներ կատարելու, ջրամատակարարման բարելավմանն ուղղված ֆինանսական ու տեխնիկական աջակցություն ցուցաբերելու, գյուղացիական տնտեսություններին ու ագրոբիզնեսին աջակցելու հնգամյա ծրագրի միջոցով: Ծրագիրը շոշափելի արդյունքներ կապահովի շուրջ 750.000 հոգու կամ գյուղական բնակչության 75%-ի համար, ու նախատեսվում է, որ այն կկրճատի գյուղական աղքատության մակարդակը՝ տարեկան եկամուտների ավելացմանը զուգընթաց:

ՀՄԿ գործառնական հարցերով փոխնախագահ Ջոն Հյուկոն պատասխանատու է ՀՄԿ ծրագրի մասնակցության իրավասություն ունեցող երկրների հետ կապերով այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առաջարկի մշակում, առաջարկված ծրագրի գնահատում, ծրագրային պայմանների բանակցում ու ծրագրի իրականացում:

Գործառնական վարչությունը սերտորեն համագործակցում է ՀՄԿ
Հաշվետվությունների վարչության ու Իրավախորհրդատվության գրասենյակի հետ
ծրագրերի արդյունավետության գնահատման, ծրագրային պայմանների
բանակցման ու ծրագրի վերահսկողության հարցերի շուրջ: Նախքան ՀՄԿ-ում
աշխատանքի անցնելը Ջոն Հյուկոն աշխատել է Բեյքեր եւ ՄքՔենզի
իրավաբանական ընկերությունում՝ մասնագիտանալով զարգացող շուկաներում
միջազգային կորպորատիվ գործառնությունների հարցում, եւ երկար տարիներ
աշխատել է ընկերության Կիեւի եւ Պրագայի գրասենյակներում: